Արձանագրություն 4
«ՀՀԿԳՆԳՀԱՊՁԲ-19/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով ատեստատների և վկայականների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 10.04.19 թ.
ժ.11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Սուսաննա Ազատյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամ՝ Կարեն Մանուկյան /գնահատող/
Կարինե Բաբայան /գնահատող/
Գոհարիկ Խաչատրյան /բացող/
Իվետա Իսրաելյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Անուշ Մարգարյան

1. Որակավորման փաստաթղթերի գնահատման մասին
(Ս. Ազատյան)

1.1 <<Ոսկան Երևանցի>> տպագրատուն ԱՀ ԲԲԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է հայտով առաջարկված ապրանքների ամբողջական նկարագրերը (տեղեկությունները):

1.2 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացվել է համապատասխան եզրակացությունը:

2. Որակավորման փաստաթղթերի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների մասին
(Ս. Ազատյան)

2.1 <<Ոսկան Երևանցի>> տպագրատուն ԱՀ ԲԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման արդյունքում արձանագրվեց, որ բացակայում են սույն ընթացակարգի հրավերի II մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը, մասնավորապես հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) պայմանագիրը և դրա հաշիվ ապրանքագրերը, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտը (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

2.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 47-րդ կետը կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել <<Ոսկան Երևանցի>> տպագրատուն ԱՀ ԲԲԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին
(Ս. Ազատյան)

3.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը կազմակերպել մասնակցի կողմից շտկված փաստաթղթերը ներկայացվելուց հետո՝ հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում ժամը 10:00-ին ՀՀ կրթության և գիտության նախարարություն, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 3-րդ հարկ, 303 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 12.04.2019թ. ժամը 10:00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Սուսաննա Ազատյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամ՝ Կարեն Մանուկյան /գնահատող/
Կարինե Բաբայան /գնահատող/
Գոհարիկ Խաչատրյան /բացող/
Իվետա Իսրաելյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Անուշ Մարգարյան

4. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին

(Ս. Ազատյան)

4.1 <<Ոսկան Երևանցի>> տպագրատուն ԱՀ ԲԲԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները:

4.2 Հիմք ընդունելով հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները <<Ոսկան Երևանցի>> տպագրատուն ԱՀ ԲԲԸ-ի հայտը 1-2-րդ չափաբաժինների մասով գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

5. Գնահատման արդյունքների մասին

(Ս. Ազատյան)

5.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 4.2 կետով ընդունված որոշումը 1-ին տեղ զբաղեցնող /ընտրված մասնակից/ հայտարարել <<Ոսկան Երևանցի>> տպագրատուն ԱՀ ԲԲԸ-ին՝ 1-2-րդ չափաբաժինների համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

5.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հիմք ընդունելով ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը՝ առանց անգործության ժամկետ սահմանելու, ընտրված մասնակցին, էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Սուսաննա Ազատյան /նախագահ/

---------- Կարեն Մանուկյան

---------- Կարինե Բաբայան

---------- Գոհարիկ Խաչատրյան

---------- Իվետա Իսրաելյան

---------- Անուշ Մարգարյան /քարտուղար/